## ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՀՀ ՄՊԳՀ ԱՊՁԲ-19/38-2

ք.Երևան «14» 11 2019թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղար՝ Ն. Հարությունյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Լուառ>> ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Քանանյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

### 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Կատարողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Պատվիրատուին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրահամար:

### 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝**

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Կատարողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 5օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 6.3կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրահամար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Կատարողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Կատարողից պահանջել հատուցելու վնասները, եթե Պատվիրատուն Կատարողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Կատարողը էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Պատվիրատուի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5օրից ավելի,

2.1.8 Չնել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Կատարողին:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Կատարողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Կատարողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Կատարողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում,երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.4 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Կատարողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

**2.3 Կատարողը իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Պատվիրատուի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.4 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Պատվիրատուն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.4.1 Պատվիրատուի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.5 Պատվիրատուի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պատվիրատուին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով,ծավալներով,ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Պատվիրատուի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Պատվիրատուին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Պատվիրատուին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Պատվիրատուի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով,լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Պատվիրատուի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն,ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Կատարողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Պատվիրատուին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Պատվիրատուին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

## 3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 18865200 (տասնութ միլիոն ութ հարյուր վաթսունհինգ հազար երկու հարյուր) ՀՀ դրամ: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Կատարողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

3.3 Պատվիրատուն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին:

## 4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Կատարողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

4.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օրացուցային օրը: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել մատակարարված ապրանքի թերություններ, ապա Կատարողը պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

## 5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով` նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված` ապրանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը, իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)` նաև հանձնման-ընդունման արձանագրությունը: Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ` լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կատարողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Կատարողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ` մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք` պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ` վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը` այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի` պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած` կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած` հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ` համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը` Կատարողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ

անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորու-թյունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատա-րելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելու հաջորդող օրվանից:

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N1և N2 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

**10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
Ք. Երևան, Կառավարական տուն 2
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011028769
ՀՎՀՀ 02698732
Գլխավոր քարտուղար

..................................Ն.
Հարությունյան
/ստորագրություն/
Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**

<<Լուառ>> ՍՊԸ
Ք. Երևան, Վարդանանց 109/21
<<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ
Հ/Հ 1150017953983954
ՀՎՀՀ 02632162

Տնօրեն՝

..................................Ա. Քանանյան
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N1
«14» «11» 2019թ. կնքված
ՀՅՍՊԳՀԱՊՁԲ-19/38-2 ծածկագրով պայմանագրի

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը և ապրանքային նշանը ** | արտադրողի անվանումը և ծագման երկիրը ** | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | քանակը | միավորի գինը | ընդամենը գինը | Մատակարարման ժամկետը * |
| 2 | 37431311/2 | Ծանրամարտի հարթակ, Atlant-sport | ООО<<Атлант-К>>, ՌԴ | Փայտյա պատվանդանով, միջանկյալ խաչուկներով: Գծման մակերեսը պատված 2,5մ հաստության հատուկ ռետինե սալիկներով: | Հատ | 1 | 3500,0 | 3500,0 | Մինչև ս.թ. դեկտեմբերի 15-ը ներառյալ, բայց ոչ շուտ, քան պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 20-րդ օրացուցային օրը, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնվում է ապրանքը մատակարարել ավելի կարճ ժամկետում: |
| 4 | 37431312/4 | Ծանրամարտի ձող-2, MB Barbell | ABF LTD, Չինաստան | Մետաղական հիմքով, քաշը 20կգ: Հատուկ միջուկով (шарнир): Մարզիկի բռնելու հատվածը հարմարեցված չսահելու համար: Բեռնատարողությունը 300-350կգ: | Հատ | 1 | 117,0 | 117,0 | Մինչև ս.թ. դեկտեմբերի 15-ը ներառյալ, բայց ոչ շուտ, քան պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 20-րդ օրացուցային օրը, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնվում է ապրանքը |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | | մատակարարել ավելի կարճ ժամկետում: |
| 5 | 37421152/3 | Մարմնամարզական կամրջակ, AIDAXY | ООО <<ОЛДИ>>, ՌԴ | Ցատկատախտակ: Փայտյա հիմքով, կորաձև պատրաստված զսպանակներով: Չափսը 60x120սմ: Դիմային հատվածը հատուկ մանրաթելերից պատրաստված ծածկույթով, միջազգային ստանդարտներին համապատասխան: | Հատ | 3 | 180,0 | 540,0 | Մինչև ս.թ. դեկտեմբերի 15-ը ներառյալ, բայց ոչ շուտ, քան պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 20-րդ օրացուցային օրը, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնվում է ապրանքը մատակարարել ավելի կարճ ժամկետում: |
| 6 | 34521240/3 | Կանոեներ -1, OZAA | ОАО <<ОЗАА>>, Բելառուսիա | Հումքը նախատեսված միջազգային թիավարության կողմից հաստատված բոլոր չափանիշներին համապատասխան: Միջազգային մրցումներին մասնակցելու իրավունքով: Մեկ տեղանոց: Չափսերը և քաշը համապատասխան միջազգային չափորոշիչներին: Առկա արտադրողի կողմից արտադրության վկայական: | Հատ | 1 | 2846,0 | 2846,0 | Մինչև ս.թ. դեկտեմբերի 15-ը ներառյալ, բայց ոչ շուտ, քան պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 20-րդ օրացուցային օրը, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնվում է ապրանքը մատակարարել ավելի կարճ ժամկետում: |
| 7 | 34521240/4 | Կանոեներ -2, OZAA | ОАО <<ОЗАА>>, Բելառուսիա | Հումքը նախատեսված միջազգային թիավարության կողմից հաստատված բոլոր չափանիշներին համապատասխան: Միջազգային մրցումներին մասնակցելու իրավունքով: Երկու տեղանոց: Չափսերը և քաշը համապատասխան միջազգային չափորոշիչներին: Առկա արտադրողի կողմից արտադրության վկայական: | Հատ | 1 | 3260,0 | 3260,0 | Մինչև ս.թ. դեկտեմբերի 15-ը ներառյալ, բայց ոչ շուտ, քան պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 20-րդ օրացուցային օրը, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնվում է ապրանքը մատակարարել ավելի կարճ |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | | ժամկետում: |
| 12 | 37451721/2 | Ճկասուսերի էլեկտրական բաճկոն, STM | STM LTD, Ուկրաինա | Հատուկ կիսասինթետիկ զգայուն հումքից պատրաստված, միջազգային մրցումային չափորոշիչներին համապատասխան հագուստ հատուկ սուսերամարտի համար: Տարբեր չափսերի, գույնը սպիտակ: Մակարդակը պրոֆեսիոնալ: Հաստատված արտադրողի կողմից վկայականով: | Հատ | 9 | 85,0 | 765,0 | Մինչև ս.թ. դեկտեմբերի 15-ը ներառյալ, բայց ոչ շուտ, քան պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 20-րդ օրացուցային օրը, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնվում է ապրանքը մատակարարել ավելի կարճ ժամկետում: |
| 13 | 37451722/2 | Ճկասուսերի լար, STM | STM LTD, Ուկրաինա | Սուսերամարտի միջազգային մրցումների համար նախատեսված: Էլեկտրական լարեր, որոնք հաղորդակցություն են ստեղծում մարզիկի և մրցավարական կետի միջև: Զգայուն և բարձրակարգ լարեր, որոնք ունեն պրոֆեսիոնալ մակարդակ: Հաստատված արտադրողի կողմից վկայականով: | Հատ | 15 | 29,0 | 435,0 | Մինչև ս.թ. դեկտեմբերի 15-ը ներառյալ, բայց ոչ շուտ, քան պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 20-րդ օրացուցային օրը, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնվում է ապրանքը մատակարարել ավելի կարճ ժամկետում: |
| 14 | 37421260/4 | Սուսերի շեղբեր -2, STM | STM LTD, Ուկրաինա | Մետաղական հիմքով, 1000 աստիճան եփված մետաղից պատրաստված, պրոֆեսիոնալ մակարդակի մրցումային: Հաստատված արտադրողի կողմից վկայականով: | Հատ | 25 | 25,80 | 645,0 | Մինչև ս.թ. դեկտեմբերի 15-ը ներառյալ, բայց ոչ շուտ, քան պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 20-րդ օրացուցային օրը, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնվում է ապրանքը մատակարարել ավելի կարճ ժամկետում: |
| 21 | 37461330/2 | Հրաձգ | SHERSHEN | Չեխական կամ համարժեք | Հատ | 600000 | 0.007 | 4200,0 | Մինչև ս.թ. |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | ության մանրագնդակներ, SHERSHEN | LTD, Ուկրաինա | արտադրության մանրագնդակներ, 4.49կամ 4.50մմ տրամաչափ:0,500հց 0,550գրամ 1 հատիկը: | տ | | | | դեկտեմբերի 15-ը ներառյալ, բայց ոչ շուտ, քան պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 20-րդ օրացուցային օրը, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնվում է ապրանքը մատակարարել ավելի կարճ ժամկետում: |
| 37 | 37461160/2 | Սեղանի թենիսի սեղաններ, STIGA | STIGA S.p.A., Չինաստան | Ստանդարտներին համապատասխան, գույնը կապույտ, բաղկացած է երկու իրար համասար դաշտերից, ծալվող. Ոտքերը անիվներով Չափսը 140x280սմ: Դաշտի հաստությունը 2000մմ: Մակարդակը պրոֆեսիոնալ, մրցումային չափորոշիչներին համապատասխան: | Հատ | 4 | 160.0 | 640,0 | Մինչև ս.թ. դեկտեմբերի 15-ը ներառյալ, բայց ոչ շուտ, քան պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 20-րդ օրացուցային օրը, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնվում է ապրանքը մատակարարել ավելի կարճ ժամկետում: |
| 42 | 37451580/2 | Վոլեյբոլի գնդակներ, GAOFENG | GAOFENG SPORT, Չինաստան | Չափսը N5, կաշվին փոխարինող բարձրակարգ հումքից, ռետինե միջուկով, քաշը 280-300գ.:Մրցումային չափորոշիչներին համապատասխան: Վոլեյբոլի միջազգային ֆեդերացիայի կողմից հաստատված լոգոյով: | Հատ | 96 | 8,20 | 787,20 | Մինչև ս.թ. դեկտեմբերի 15-ը ներառյալ, բայց ոչ շուտ, քան պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 20-րդ օրացուցային օրը, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնվում է ապրանքը մատակարարել ավելի կարճ ժամկետում: |
| 46 | 37461400/2 | Ճախմատ, Demo Wall Chess | D.W.C. LTD, Չինաստան | Պատից ցուցադրական տախտակով, 32մագնիսական քարերով, 64վանդակներով: | Լրակազ | 2 | 45,0 | 90,0 | Մինչև ս.թ. դեկտեմբերի 15-ը ներառյալ, բայց ոչ |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | Չափսը 1x1մ: Պատին ամրացվող կեռիկներով, կողքից թվերի և տառերի առկայությամբ; | մ. | | | | շուտ, քան պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 20-րդ օրացուցային օրը, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնվում է ապրանքը մատակարարել ավելի կարճ ժամկետում: |
| 49 | 39522270/2 | Փրկարարական բաճկոններ, LALIZAS | LALIZAS LTD, Հունաստան | Բաճկոնը պատրաստված է համաձայն EN 395 եվրոպական ստանդարտների, ունի 100N դրական լողունակություն: Մեծ վզնոցը լողունակ լցոնիչով, բարձրացնում է անվտանգությունը և պաշտպանում քամուց ու ջրից: Ունի ամրացման կարգավորվող գոտիներ: Կոպլեկտավորվում է մեջքի և կրծքավանդակի մասերի վրա լուսարձակ գոտիներով: Երեսպատումը՝ պոլիէստերային գործվածք, լցոնիչ պենոպոլիէթիլեն: 45-55կգ-ի համար նախատեսված: | հատ | 10 | 26,0 | 260,0 | Մինչև ս.թ. դեկտեմբերի 15-ը ներառյալ, բայց ոչ շուտ, քան պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 20-րդ օրացուցային օրը, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնվում է ապրանքը մատակարարել ավելի կարճ ժամկետում: |
| 50 | 39522310/2 | Փրկագոտի, LALIZAS | LALIZAS LTD, Հունաստան | Փրկագոտին ունի ամրացման կարգավորվող գոտիներ: Կոպլեկտավորվում է մեջքի և կրծքավանդակի մասերի վրա լուսարձակ գոտիներով: Երեսպատումը՝ պոլիէստերային գործվածք, լցոնիչ պենոպոլիէթիլեն: 45-65կգ-ի համար նախատեսված: | հատ | 30 | 26,0 | 780,0 | Մինչև ս.թ. դեկտեմբերի 15-ը ներառյալ, բայց ոչ շուտ, քան պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 20-րդ օրացուցային օրը, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնվում է ապրանքը մատակարարել ավելի կարճ ժամկետում: |

*Մատակարարման ժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:*

**Բոլոր չափաբաժինների համար**

1. Ապրանքները պետք է լինեն նոր՝ չօգտագործված:

2. Բոլոր ապրանքների համար /երաշխիքային ժամկետ առնվազն 365 օրացուցային օր/:

3. Ապրանքների փոխադրումը և բեռնաթափումը իրականացվում է Կատարողի կողմից՝ համաձայն կից բաշխման ցանկի:

4. Պայմանագրի կատարման փուլում համապատասխանության սերտիֆիկատի ներկայացման անհրաժեշտություն.

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| ---------------- Ն.Յարությունյան | ---------------- Ա.Քանանյան |
| /ստորագրություն/Կ.Տ | /ստորագրություն/Կ.Տ |

Հավելված N2
«14» «11» 2019թ. կնքված
ՀՀ ՍՊԳՀ ԱՊՁԲ-19/38-2 ծածկագրով պայմանագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Հազ. դրամ

| Հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը` ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | Ապրանքի անվանումը | Ենթակա է վճարման 2019թ պետական բյուջեից, ընդորում. 1-ին եռամսյակ | 1-ին կիսամյակ | 9 ամիս | | | Տարի | | | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | - | - | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբերի 30-ը | |
| 2 | 37431311/2 | Ծանրամարտի հարթակ | - | - | - | - | - | - | 3500,0 | 3500,0 | 3500,0 |
| 4 | 37431312/4 | Ծանրամարտի ձող-2 | - | - | - | - | - | - | 117,0 | 117,0 | 117,0 |
| 5 | 37421152/3 | Մարմնամարզական կամրջակ | - | - | - | - | - | - | 540,0 | 540,0 | 540,0 |
| 6 | 34521240/3 | Կանոեներ-1 | - | - | - | - | - | - | 2846,0 | 2846,0 | 2846,0 |
| 7 | 34521240/4 | Կանոեներ-2 | - | - | - | - | - | - | 3260,0 | 3260,0 | 3260,0 |
| 12 | 37451721/2 | Ճկասուսերի էլեկտրական բաճկոն | - | - | - | - | - | - | 765,0 | 765,0 | 765,0 |
| 13 | 37451722/2 | Ճկասուսերի լար | - | - | - | - | - | - | 435,0 | 435,0 | 435,0 |
| 14 | 37421260/4 | Սուսերի շեղբեր-2 | - | - | - | - | - | - | 645,0 | 645,0 | 645,0 |
| 21 | 37461330/2 | Հրաձգության մանրագնդակներ | - | - | - | - | - | - | 4200,0 | 4200,0 | 4200,0 |
| 37 | 37461160/2 | Սեղանի թենիսի սեղաններ | - | - | - | - | - | - | 640,0 | 640,0 | 640,0 |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 42 | 37451580/2 | Վոլեյբոլի գնդակներ | - | - | | - | - | | 787,20 | 787,20 | 787,20 |
| 46 | 37461400/2 | Ճախմատ | - | - | - | - | - | - | 90,0 | 90,0 | 90,0 |
| 49 | 39522270/2 | Փրկարարական բաճկոններ | - | - | - | - | - | - | 260,0 | 260,0 | 260,0 |
| 50 | 39522310/2 | Փրկագոտի | - | - | - | - | - | - | 780,0 | 780,0 | 780,0 |

*Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

---------------------Ն.Հարությունյան
/ստորագրություն/Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**

---------------------Ա.Քանանյան
/ստորագրություն/Կ.Տ

**ԲԱՇԽՄԱՆ ՑՈՒՑԱԿ***
**ՄԱՐԶԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ**

| Կազմակերպության անվանումը | Գույքի անվանումը | Չափի միավորը | Գույքի քանակը |
| --- | --- | --- | --- |
| «Աթլետիկայի օլիմպիական մանկապատանեկան մարզադպրոց» ՊՈԱԿ | Ատրճանակներ | հատ | 1 |
| | Սպորտային փամփուշտ | հատ | 500 |
| | Գնդեր (հրման համար) | հատ | 10 |
| «Երևանի օլիմպիական մանկապատանեկան համալիր մարզադպրոց» ՊՈԱԿ | Ըմբշամարտի գորգի ծածկոց | հատ | 1 |
| | Ըմբշամարտի ներքնակ | հատ | 72 |
| «Երևանի հրաձգության մանկապատանեկան մարզադպրոց» ՊՈԱԿ | Հրաձգության մանրագնդակներ | հատ | 500000 |
| | Հրացան | հատ | 1 |
| | Ատրճանակներ | հատ | 1 |
| | Սպորտային փամփուշտ | հատ | 12000 |
| | Ճկասուսերի էլեկտրական բաճկոն | հատ | 5 |
| | Սուսերի շեղբեր | հատ | 10 |
| «Հ. Ծաթինյանի անվ. սպորտային, գեղարվեստական մարմնամարզության և ակրոբատիկայի օլիմպիական մանկապատանեկան մարզադպրոց» ՊՈԱԿ | Զուգափայտեր | հատ | 8 |
| | Զուգափայտեր | հատ | 8 |
| | Մարզման ցատկացանցեր (բատուտ) | հատ | 1 |
| | Մագնեզիում | կգ | 50 |
| | Մարմնամարզական ներքնակներ | հատ | 30 |
| | Պտտածող | լրակազմ | 2 |
| | Մարմնամարզական պարան՝ մագլցման պարան | հատ | 2 |
| | Մարմնամարզական կամրջակ | հատ | 2 |
| | Ուղեգորգեր | քմ | 25 |
| | Ուղեգորգեր | քմ | 25 |
| | Մարմնամարզական օղակ | հատ | 20 |
| | Մարմնամարզության ժապավեն | հատ | 18 |
| | Գնդակ | հատ | 18 |
| | Բուլավա | հատ | 18 |
| «Վլ. Ենգիբարյանի անվան բռնցքամարտի օլիմպիական մանկապատանեկան մարզադպրոց» ՊՈԱԿ | Էլեկտրոնային կշեռքներ և պարագաներ | հատ | 1 |

| | | | |
|---|---|---|---|
| «Երևանի ծանրամարտի մանկապատանեկան մարզադպրոց» ՊՈԱԿ | Ծանրաձողեր | լրակազմ | 1 |
| | Ծանրաձողեր | լրակազմ | 1 |
| | Մագնեզիում | կգ | 100 |
| «Թիավարության մարզաձևերի օլիմպիական մանկապատանեկան մարզադպրոց» ՊՈԱԿ | Փրկարարական բաճկոներ | հատ | 10 |
| | Այլ մասնագիտացված նավակներ | լրակազմ | 4 |
| | Բայդարկայի գոգնոց | հատ | 10 |
| «Հեծանվային սպորտի օլիմպիական մանկապատանեկան մարզադպրոց» ՊՈԱԿ | Առանց շարժիչի հեծանիվներ | հատ | 10 |
| | Առանց շարժիչի հեծանիվներ | հատ | 10 |
| «Գյումրու ծանրամարտի մանկապատանեկան մարզադպրոց» ՊՈԱԿ | Ծանրաձողեր | լրակազմ | 1 |
| | Ծանրաձողեր | լրակազմ | 1 |
| «Գյումրու սուսերամարտի մանկապատանեկան մարզադպրոց» ՊՈԱԿ | Ճկասուսերի Էլեկտրական բաճկոն | հատ | 4 |
| | Գնդակ | հատ | 1 |
| «Գյումրու մանկապատանեկան համալիր մարզադպրոց» ՊՈԱԿ | Բասկետբոլի գնդակ | հատ | 20 |
| | Ֆուտբոլի գնդակներ | հատ | 20 |
| | Բռնցքամարտի մարզաթաթ (լապա) | հատ | 4 |
| «Սպիտակի համալիր մանկապատանեկան մարզադպրոց» ՊՈԱԿ | Մարմնամարզական պարան՝ մագլցման համար | հատ | 2 |
| | Ըմբշամարտի գորգի ծածկոց | հատ | 1 |
| | Գնդակ | հատ | 6 |
| | Բռնցքամարտի ձեռնոց | զույգ | 20 |
| | Սաղավարտներ | հատ | 13 |
| | Շախմատի քարեր | լրակազմ | 10 |
| «Ծաղկաձորի Լ.Հարությունյանի անվան լեռնադահուկային մանկապատանեկան մարզադպրոց» ՊՈԱԿ | Դահուկներ | հատ | 8 |
| | Դահուկներ | հատ | 8 |
| «Ռազմիկ Կարապետյանի անվան մենապայքարային մարզաձևերի մանկապատանեկան մարզադպրոց» ՊՈԱԿ | Ըմբշամարտի գորգի ծածկոց | հատ | 1 |
| | Ֆուտբոլի գնդակներ | հատ | 10 |
| «Սևանի ջրային մարզաձևերի մանկապատանեկան մարզադպրոց» ՊՈԱԿ | Այլ մասնագիտացված նավակներ | հատ | 2 |
| | Այլ մասնագիտացված նավակներ | հատ | 2 |
| | Կանոեներ | հատ | 1 |

| | | | |
|---|---|---|---|
| | Կանոններ | հատ | 1 |
| | Փրկագոտի | հատ | 30 |
| | Վոլեյբոլի գնդակ | հատ | 30 |
| | Վոլեյբոլի ցանց | հատ | 2 |
| | Վոլեյբոլի կանգնակ | հատ | 4 |
| «Հրազդանի մականախաղի և շախմատի օլիմպիական մանկապատանեկան մարզադպրոց» ՊՈԱԿ | Հոկեի մականներ | հատ | 40 |
| | Հոկեի մականներ | հատ | 40 |
| | Հոկեի մականներ | հատ | 40 |
| | Դարպասապահի մական | հատ | 20 |
| | Մականախաղի գնդակ | հատ | 100 |
| «Արմավիրի մենապայքարային մարզաձևերի մանկապատանեկան մարզադպրոց» ՊՈԱԿ | Ծածկոցով ըմբշամարտի գորգ | լրակազմ | 1 |
| | Բռնցքամարտի պատի բարձ | հատ | 2 |
| | Բռնցքամարտի պարկ | հատ | 2 |
| | Բռնցքամարտի մարզաթաթ (լապա) | հատ | 2 |
| «Քաջարանի համալիր մանկապատանեկան մարզադպրոց» ՊՈԱԿ | Ֆուտբոլի գնդակներ | հատ | 10 |
| | Մարմնամարզական գորգեր | հատ | 169 |
| | Ծանրամարտի ձող | հատ | 1 |
| | Ծանրամարտի ձող | հատ | 1 |
| | Բռնցքամարտի տանձիկ | հատ | 5 |
| | Բասկետբոլի գնդակ | հատ | 20 |
| | Վոլեյբոլի գնդակ | հատ | 15 |
| | Հանդբոլի գնդակ | հատ | 10 |
| «Գյումրու աթլետիկայի օլիմպիական մանկապատանեկան մարզադպրոց» ՊՈԱԿ | Սկավառակներ | հատ | 3 |
| | Գնդեր (հրման համար) | հատ | 3 |
| | Նիզակներ նետման համար | հատ | 2 |
| | Նիզակներ նետման համար | հատ | 2 |
| «Վանաձորի բռնցքամարտի մանկապատանեկան մարզադպրոց» ՊՈԱԿ | Մարմնամարզական պարան՝ մագլցման համար | հատ | 1 |
| | Բռնցքամարտի ձեռնոց | զույգ | 20 |
| | Սաղավարտներ | հատ | 20 |
| | Բռնցքամարտի գոնգ | հատ | 1 |

| | | | |
|---|---|---|---|
| «Երևանի ծանրամարտի մանկապատանեկան մարզադպրոց»ՊՈԱԿ | Ծանրաձողեր | լրակազմ | 1 |
| | Ծանրաձողեր | լրակազմ | 1 |
| | Մագնեզիում | կգ | 100 |
| «Թիավարության մարզաձևերի օլիմպիական մանկապատանեկան մարզադպրոց»ՊՈԱԿ | Փրկարարական բաճկոններ | հատ | 10 |
| | Այլ մասնագիտացված նավակներ | լրակազմ | 4 |
| | Բայդարկայի գոգնոց | հատ | 10 |
| «Հեծանվային սպորտի օլիմպիական մանկապատանեկան մարզադպրոց»ՊՈԱԿ | Առանց շարժիչի հեծանիվներ | հատ | 10 |
| | Առանց շարժիչի հեծանիվներ | հատ | 10 |
| «Գյումրու ծանրամարտի մանկապատանեկան մարզադպրոց»ՊՈԱԿ | Ծանրաձողեր | լրակազմ | 1 |
| | Ծանրաձողեր | լրակազմ | 1 |
| «Գյումրու սուսերամարտի մանկապատանեկան մարզադպրոց»ՊՈԱԿ | Ճկասուսերի Էլեկտրական բաճկոն | հատ | 4 |
| | Գնդակ | հատ | 1 |
| «Գյումրու մանկապատանեկան համալիր մարզադպրոց»ՊՈԱԿ | Բասկետբոլի գնդակ | հատ | 20 |
| | Ֆուտբոլի գնդակներ | հատ | 20 |
| | Բռնցքամարտի մարզաթաթ (լապա) | հատ | 4 |
| «Սպիտակի համալիր մանկապատանեկան մարզադպրոց» ՊՈԱԿ | Մարմնամարզական պարան՝ մագլցման համար | հատ | 2 |
| | Ըմբշամարտի գորգի ծածկոց | հատ | 1 |
| | Գնդակ | հատ | 6 |
| | Բռնցքամարտի ձեռնոց | զույգ | 20 |
| | Սաղավարտներ | հատ | 13 |
| | Շախմատի քարեր | լրակազմ | 10 |
| «Ծաղկաձորի Լ.Հարությունյանի անվան լեռնադահուկային մանկապատանեկան մարզադպրոց» ՊՈԱԿ | Դահուկներ | հատ | 8 |
| | Դահուկներ | հատ | 8 |
| «Ռազմիկ Կարապետյանի անվան մենապայքարային մարզաձևերի մանկապատանեկան մարզադպրոց»ՊՈԱԿ | Ըմբշամարտի գորգի ծածկոց | հատ | 1 |
| | Ֆուտբոլի գնդակներ | հատ | 10 |
| «Սևանի ջրային մարզաձևերի մանկապատանեկան մարզադպրոց»ՊՈԱԿ | Այլ մասնագիտացված նավակներ | հատ | 2 |
| | Այլ մասնագիտացված նավակներ | հատ | 2 |
| | Կանոեներ | հատ | 1 |

| | | | |
|---|---|---|---|
| | Կանոններ | հատ | 1 |
| | Փրկագոտի | հատ | 30 |
| | Վոլեյբոլի գնդակ | հատ | 30 |
| | Վոլեյբոլի ցանց | հատ | 2 |
| | Վոլեյբոլի կանգնակ | հատ | 4 |
| «Հրազդանի մականախաղի և շախմատի օլիմպիական մանկապատանեկան մարզադպրոց» ՊՈԱԿ | Հոկեի մականներ | հատ | 40 |
| | Հոկեի մականներ | հատ | 40 |
| | Հոկեի մականներ | հատ | 40 |
| | Դարպասապահի մական | հատ | 20 |
| | Մականախաղի գնդակ | հատ | 100 |
| «Արմավիրի մենապայքարային մարզաձևերի մանկապատանեկան մարզադպրոց» ՊՈԱԿ | Ծածկոցով ըմբշամարտի գորգ | լրակազմ | 1 |
| | Բռնցքամարտի պատի բարձ | հատ | 2 |
| | Բռնցքամարտի պարկ | հատ | 2 |
| | Բռնցքամարտի մարզաթաթ (լապա) | հատ | 2 |
| «Քաջարանի համալիր մանկապատանեկան մարզադպրոց» ՊՈԱԿ | Ֆուտբոլի գնդակներ | հատ | 10 |
| | Մարմնամարզական գորգեր | հատ | 169 |
| | Ծանրամարտի ձող | հատ | 1 |
| | Ծանրամարտի ձող | հատ | 1 |
| | Բռնցքամարտի տանձիկ | հատ | 5 |
| | Բասկետբոլի գնդակ | հատ | 20 |
| | Վոլեյբոլի գնդակ | հատ | 15 |
| | Հանդբոլի գնդակ | հատ | 10 |
| «Գյումրու աթլետիկայի օլիմպիական մանկապատանեկան մարզադպրոց» ՊՈԱԿ | Սկավառակներ | հատ | 3 |
| | Գնդեր (հրման համար) | հատ | 3 |
| | Նիզակներ նետման համար | հատ | 2 |
| | Նիզակներ նետման համար | հատ | 2 |
| «Վանաձորի բռնցքամարտի մանկապատանեկան մարզադպրոց» ՊՈԱԿ | Մարմնամարզական պարան՝ մագլցման համար | հատ | 1 |
| | Բռնցքամարտի ձեռնոց | զույգ | 20 |
| | Սաղավարտներ | հատ | 20 |
| | Բռնցքամարտի գոնգ | հատ | 1 |

| | | | |
|---|---|---|---|
| «Երևանի օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջ» ՊՈԱԿ | Բռնցքամարտի տանձիկ | հատ | 10 |
| | Բռնցքամարտի մարզաթաթ (լապա) | հատ | 5 |
| | Ծանրաձողեր | լրակազմ | 1 |
| | Ծանրաձողեր | լրակազմ | 1 |
| | Մարմնամարզական պարան՝ մագլցման համար | հատ | 5 |
| | Մարմնամարզական ներքնակներ | հատ | 4 |
| | Ծանրամարտի հարթակ | հատ | 1 |
| «Երևանի Շենգավիթի սեղանի թենիսի և թենիսի մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ | Սեղանի թենիսի սեղան | հատ | 2 |
| | Վարժասարք | հատ | 1 |
| | Սեղանի թենիսի ձեռնաթիակներ | հատ | 10 |
| | Սեղանի թենիսի գնդակ | հատ | 500 |
| | Սեղանի թենիսի ցանց | լրակազմ | 4 |
| «Երևանի Շենգավիթի ակրոբատիկայի և գեղարվեստական մարմնամարզության մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ | Մարզման ցատկացանցեր (բատուտ) | հատ | 1 |
| | Մարմնամարզական կամրջակ | հատ | 1 |
| | Մարմնամարզական ներքնակներ | հատ | 30 |
| «Հայաստանի բադմինտոնի ֆեդերացիա» ՀԿ | Բադմինտոնի կորտ | լրակազմ | 2 |
| ՀՀ Կոտայքի մարզի «Չարենցավանի համայնքի Արա Մանուկյանի անվան ՄՊՄԴ» ՀՈԱԿ | Ծածկոցով ըմբշամարտի գորգ | լրակազմ | 1 |
| | Բռնքցամարտի ռինգ | լրակազմ | 1 |
| | Բռնցքամարտի տանձիկ | հատ | 15 |
| | Բռնցքամարտի խրտվիլակ | հատ | 2 |
| | Բռնցքամարտի ձեռնոց | զույգ | 20 |
| | Բռնցքամարտի մարզաթաթ (լապա) | հատ | 5 |
| | Ծանրաձողեր | լրակազմ | 2 |
| | Ծանրաձողի հենակ | հատ | 2 |
| | Ռետինե հատակ | հատ | 40 |
| | Կշռաքար | հատ | 20 |
| | Վարժասարք | հատ | 2 |
| | Վարժասարք | հատ | 2 |
| | Վարժասարք | հատ | 2 |
| | Մարմնամարզական նստարան | հատ | 30 |
| | Մարմնամարզական ներքնակներ | հատ | 10 |

| | | | |
|---|---|---|---|
| | Մարմնամարզական պատ | հատ | 20 |
| | Մարմնամարզական պարան` մագլցման համար | հատ | 8 |
| | Պտտաձող | լրակազմ | 1 |
| | Բասկետբոլի կանգնակ | հատ | 1 |
| | Վոլեյբոլի կանգնակ | հատ | 2 |
| | Ֆուտբոլի դարպասներ | հատ | 2 |
| | Դարպասի ցանց | հատ | 2 |
| | Սեղաններ | հատ | 10 |
| | Շախմատ | լրակազմ | 2 |
| ՀՀ Լոռու մարզի Վանաձորի «Օլիմպիական հերթափոխի մենապայքարային մարզաձևերի մարզադպրոց» ՀՈԱԿ | Ըմբշամարտի գորգի ծածկոց | հատ | 2 |
| | Մարմնամարզական պարան` մագլցման համար | հատ | 3 |
| | Բռնցքամարտի տանձիկ | հատ | 4 |
| | Բռնցքամարտի պարկ | հատ | 4 |
| ՀՀ Լոռու մարզի Վանաձորի «Ֆուտբոլի մասնագիտացված մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ | Ֆուտբոլի գնդակներ | հատ | 20 |
| | Գնդակ | հատ | 10 |
| | Դարպասի ցանց | հատ | 4 |
| ՀՀ Լոռու մարզի Վանաձորի «Ծանրամարտի մասնագիտացված մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ | Ծանրաձողեր | լրակազմ | 1 |
| ՀՀ Լոռու մարզի Վանաձորի «Ա.Ազարյանի անվան «Կենտրոն» համալիր մարզադպրոց» ՀՈԱԿ | Ծանրաձողեր | լրակազմ | 1 |
| | Վոլեյբոլի գնդակ | հատ | 20 |
| | Բասկետբոլի գնդակ | հատ | 20 |
| | Հանդբոլի գնդակ | հատ | 20 |
| | Մարմնամարզական պարան` մագլցման համար | հատ | 2 |
| | Մարմնամարզական ներքնակներ | հատ | 5 |
| ՀՀ Լոռու մարզի Վանաձորի «Տարոն» համալիր մարզադպրոց» ՀՈԱԿ | Բադմինթոնի ձեռնաթիակներ | հատ | 10 |
| | Բադմինտոնի փետրավոր գնդակներ (վոլան) | հատ | 30 |
| | Ծածկոցով ըմբշամարտի գորգ | լրակազմ | 1 |
| ՀՀ Սյունիքի մարզի «Գորիսի տարածքային մանկապատանեկան մարզադպրոց» ՊՈԱԿ | Բասկետբոլի գնդակ | հատ | 10 |
| | Ծածկոցով ըմբշամարտի գորգ | լրակազմ | 1 |
| | Ըմբշամարտի խրտվիլակ | հատ | 2 |
| | Բասկետբոլի գնդակ | հատ | 6 |

| | | | |
|---|---|---|---|
| | Վոլեյբոլի գնդակ | հատ | 6 |
| ՀՀ Սյունիքի մարզի «Գորիսի մանկապատանեկան մարզադպրոց»ՀՈԱԿ | Ֆուտբոլի գնդակներ | հատ | 6 |
| | Մարմնամարզական պատ | հատ | 4 |
| | Բռնցքամարտի տանձիկ | հատ | 10 |
| | Մարմնամարզական պարան՝ մագլցման համար | հատ | 5 |
| | Վոլեյբոլի գնդակ | հատ | 5 |
| ՀՀ Սյունիքի մարզի «Սիսիանի մանկապատանեկան մարզադպրոց»ՀՈԱԿ | Ֆուտբոլի գնդակներ | հատ | 10 |
| | Բասկետբոլի գնդակ | հատ | 10 |
| | Վոլեյբոլի գնդակ | հատ | 10 |
| | Հանդբոլի գնդակ | հատ | 10 |
| | Ֆուտբոլի գնդակներ | հատ | 10 |
| ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի «Յուրի Վարդանյանի անվան ծանրամարտի մարզադպրոց»ՀՈԱԿ | Ժամացույցներ | հատ | 4 |
| | Ծանրաձողեր | լրակազմ | 1 |
| ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի «Համալիր մանկապատանեկան մարզադպրոց»ՀՈԱԿ | Ֆուտբոլի գնդակներ | հատ | 4 |
| | Հանդբոլի գնդակ | հատ | 20 |
| | Մարմնամարզական նստարան | հատ | 4 |
| | Բռնցքամարտի տանձիկ | հատ | 2 |
| | Բռնցքամարտի ձեռնոց | զույգ | 3 |
| | Մարմնամարզական օղակ | հատ | 10 |
| | Գնդակ | հատ | 10 |
| | Մարմնամարզական ներքնակներ | հատ | 6 |
| ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայքնի «Ալեքսան Հակոբյանի թենիսի և սեղանի թենիսի մարզադպրոց» ՀՈԱԿ | Սեղանի թենիսի սեղան | հատ | 2 |
| | Սեղանի թենիսի գնդակ | հատ | 90 |
| | Սեղանի թենիսի ցանց | լրակազմ | 2 |
| | Սեղանի թենիսի ձեռնաթիակներ | հատ | 10 |
| | Վարժասարք | հատ | 1 |
| | Թենիսի ցանց | հատ | 2 |
| | Թենիսի ձեռնաթիակներ | հատ | 20 |
| | Թենիսի գնդակներ | հատ | 80 |
| ՀՀ Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի | Նիզակներ նետման համար | հատ | 10 |

| | | | |
|---|---|---|---|
| «Աթլետիկայի մարզադպրոց» ՀՈԱԿ | Սկավառակներ | հատ | 10 |
| | Գնդեր (հրման համար) | հատ | 10 |
| | Բարձրացատկի ձող | հատ | 20 |
| | Թեթև ատլետիկայի սարքեր | հատ | 12 |
| ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի «Հրաձգության մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ | Մարմնամարզական պատ | հատ | 3 |
| | Հրացան | հատ | 1 |
| | Ատրճանակներ | հատ | 1 |
| | Հրաձգության մանրագնդակներ | հատ | 100000 |
| ՀՀ Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի «Բռնցքամարտի մարզադպրոց» ՀՈԱԿ | Բռնցքամարտի ձեռնոց | զույգ | 20 |
| ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայքնի «Մարմնամարզական մարզաձևերի մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ | Մարմնամարզական նստարան | հատ | 4 |
| | Մարմնամարզական ներքնակներ | հատ | 10 |
| | Մարմնամարզական պատ | հատ | 6 |
| | Մարմնամարզական պարան՝ մագլցման համար | հատ | 4 |
| ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի «Ազատոճի ըմբշամարտի մարզադպրոց» ՀՈԱԿ | Մարմնամարզական նստարան | հատ | 4 |
| | Ծածկոցով ըմբշամարտի գորգ | լրակազմ | 1 |
| | Ըմբշամարտի խրտվիլակ | հատ | 2 |
| | Մարմնամարզական նստարան | հատ | 3 |
| | Մարմնամարզական պատ | հատ | 4 |
| ՀՀ Շիրակի մարզի «Ամասիայի մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ | Ֆուտբոլի գնդակներ | հատ | 20 |
| | Նիզակներ նետման համար | հատ | 3 |
| | Սկավառակներ | հատ | 6 |
| | Գնդեր (հրման համար) | հատ | 6 |
| ՀՀ Շիրակի մարզի «Գյումրու մարզական բարձրագույն վարպետության դպրոց» ՊՈԱԿ | Ծանրաձողեր | լրակազմ | 1 |
| | Ծածկոցով ըմբշամարտի գորգ | հատ | 1 |
| | Մարմնամարզական նստարան | հատ | 6 |
| ՀՀ Արարատի մարզի «Արտաշատ քաղաքի Ռ.Գոլեցյանի անվան ըմբշամարտի ՕՀՄՊ մարզադպրոց» ՀՈԱԿ | Գնդակ | հատ | 5 |
| | Բասկետբոլի գնդակ | հատ | 5 |
| | Մարմնամարզական պարան՝ մագլցման համար | հատ | 1 |

| | | | |
|---|---|---|---|
| | Ծանրաձողեր | լրակազմ | 2 |
| | Բասկետբոլի ցանց | հատ | 2 |
| ՀՀ Արարատի մարզի «Արտաշատ քաղաքի մանկապատանեկան համալիր մարզադպրոց» ՀՈԱԿ | Թեթև ատլետիկայի սարքեր | հատ | 12 |
| | Գնդեր (հրման համար) | հատ | 2 |
| | Սկավառակներ | հատ | 2 |
| | Նիզակներ նետման համար | հատ | 2 |
| | Նիզակներ նետման համար | հատ | 2 |
| | Ֆուտբոլի գնդակներ | հատ | 5 |
| ՀՀ Արարատի մարզի «Մարտին Վարդանյանի անվան Վեդու քաղաքային մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ | Ծածկոցով ըմբշամարտի գորգ | լրակազմ | 1 |
| | Ըմբշամարտի խրտվիլակ | հատ | 1 |
| | Մարմնամարզական պարան` մագլցման համար | հատ | 1 |
| | Մարմնամարզական նստարան | հատ | 3 |
| | Մարմնամարզական պատ | հատ | 2 |
| | Ծանրաձողեր | լրակազմ | 1 |
| | Ֆուտբոլի գնդակներ | հատ | 5 |
| | Բասկետբոլի գնդակ | հատ | 5 |
| | Գնդակ | հատ | 2 |
| | Ծանրաձողի կանգնակ | զույգ | 1 |
| | Բռնցքամարտի տանձիկ | հատ | 2 |
| ՀՀ Արարատի մարզի «Արարատ քաղաքի մարզադպրոց» ՀՈԱԿ | Ծանրաձող մարզումային 100կգ | լրակազմ | 1 |
| | Մագլցման պարան | հատ | 1 |
| | Բասկետբոլի գնդակ | հատ | 5 |
| | Շվեդական պատ | հատ | 3 |
| ՀՀ Արագածոտնի մարզի «Աշտարակի մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ | Ըմբշամարտի գորգի ծածկոց | հատ | 1 |
| | Մագլցման պարան | հատ | 2 |
| | Բռնցքամարտի տանձիկ | հատ | 2 |
| | Վոլեյբոլի գնդակ | հատ | 5 |
| | Բասկետբոլի գնդակ | հատ | 5 |

| | | | |
|---|---|---|---|
| ՀՀ Արագածոտնի մարզի Թալինի «Գարեգին Ավդալյանի անվան մարզադպրոց»ՀՈԱԿ | Ըմբշամարտի խրտվիլակ | հատ | 3 |
| | Ֆուտբոլի գնդակ | հատ | 3 |
| | Բասկետբոլի գնդակ | հատ | 2 |
| ՀՀ Գեղարքունիքի մարզի «Մարտունու քաղաքապետարանի Սմբատ Միհերյանի անվան մարզադպրոց»ՀՈԱԿ | Ըմբշամարտի խրտվիլակ | հատ | 2 |
| | Բռնցքամարտի պարկ | հատ | 4 |
| | Բասկետբոլի գնդակ | հատ | 6 |
| ՀՀ Գեղարքունիքի մարզի «Գավառի քաղաքապետարանի մարզադպրոց»ՀՈԱԿ» | Ըմբշամարտի խրտվիլակ | հատ | 2 |
| | Բասկետբոլի գնդակ | հատ | 6 |
| | Ծանրաձողեր | լրակազմ | 1 |
| | Բռնցքամարտի տանձիկ | հատ | 2 |
| | Գնդակ | հատ | 2 |
| ՀՀ Գեղարքունիքի մարզի «Գեղարքունիքի մարզային մարզադպրոց»ՊՈԱԿ | Վոլեյբոլի գնդակ | հատ | 5 |
| | Ֆուտբոլի գնդակ | հատ | 5 |
| | Հանդբոլի գնդակ | հատ | 5 |
| | Մարմնամարզական ներքնակ | հատ | 4 |
| ՀՀ Գեղարքունիքի մարզի «Սևանի Նորիկ Դագարյանի անվան մանկապատանեկան մարզադպրոց»ՀՈԱԿ | Բռնցքամարտի պարկ | հատ | 3 |
| | Մարմնամարզական պատ | հատ | 2 |
| | Ծածկոցով ըմբշամարտի գորգ | լրակազմ | 1 |
| ՀՀ Գեղարքունիքի մարզի «Վարդենիսի քաղաքային մարզադպրոց»ՀՈԱԿ | Ծածկոցով ըմբշամարտի գորգ | լրակազմ | 1 |
| ՀՀ Տավուշի մարզի «Իջևանի քաղաքապետարանի մարզահամալիր»ՀՈԱԿ | Ծածկոցով ըմբշամարտի գորգ | լրակազմ | 1 |
| | Բռնցքամարտի տանձիկ | հատ | 4 |
| «Ալբերտ Գրիգորյանի անվան սուսերամարտի մանկապատանեկան մարզադպրոց»ՀՈԱԿ | Սուսերի շեղբեր | հատ | 15 |
| | Սուսերի շեղբեր | հատ | 15 |
| | Խոցասուսերի լար | հատ | 15 |
| | Ճկասուսերի լար | հատ | 15 |
| «Հայաստանի բասկետբոլի ֆեդերացիա»ՀԿ | Բասկետբոլի լուսատախտակ | լրակազմ | 1 |
| ՀՀ Արմավիրի մարզի «Էջմիածնի քաղաքապետարանի №1 մարզադպրոց»ՀՈԱԿ | Ծանրաձողեր | լրակազմ | 2 |
| | Ծածկոցով ըմբշամարտի գորգ | լրակազմ | 1 |
| | Մարմնամարզական պարան՝ մագլցման համար | հատ | 3 |

| | | | |
|---|---|---|---|
| | Մարմնամարզական պատ | հատ | 3 |
| | Գիր | հատ | 3 |
| | Գիր | հատ | 3 |
| | Գիր | հատ | 3 |

ւ րաքանչյուր մասնակից բաշխման ցանկից պետք է ընտրի իր կողմից մատակարավել իք ապրանքները

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

-----------------------Ն.Հարությունյան
/ստորագրություն/
ԿՏ

**ԿԱՏԱՐՈՂ**

-----------------------Ա.Քանանյան
/ստորագրություն/
ԿՏ